ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 13-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Կիրակի, 6 հոկտեմբերի. Այսօր Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձն է:

Այս ուրախ առիթով Մայր Աթոռ էին ժամանել բազում ուխտավորներ:

Այս տարվա սեպտեմբերին լրացավ նաև Վեհափառ Հայրապետի ծննդյան 60-ամյակը:

Թեև Ն. Ս. Օծության 60-ամյակի և գահակալության հանդիսությունները պաշտոնապես պիտի նշվեն 1969 թ. հոկտեմբերի 5-ին, այնուամենայնիվ, գահակալության 13-րդ տարեդարձն էլ Մայր Աթոռում նշվեց պատշաճ հանդիսությամբ ի միսիթարություն բազում ուխտավորների, որոնք եկել էին Մայր Աթոռ ս. Էջմիածին Հյուսիսային Ամերիկայից, Արգենտինայից, Սան-Պաուլոյից, Բուենոս-Այրեսից, Բեյրութից, Փարիզից և այլ վայրերից:

Օրվա տոնակատարության առիթով Մայր տաճարում հանդիսավոր պատարագ է մատուցում Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Տաճարը լիքն է աղոթողներով և բարեպաշտ հավատացյալներով:

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավորապես առաջնորդվում է Մայր տաճար՝ ներկա լինելու ս. պատարագի արարողությանը: Երգեցողությունը կատարվում է երգչախմբի կողմից վեհ խորհրդավորությամբ, որին իրենց մասնակցությունն են բերում երգչուհիներ Գոհար Գասպարյանը և Լուսինե Զաքարյանը:

Դասերում տեղ են գրավել Մայր Աթոռի բարերարներ տիարք Հ. Գավուքչյանը, Տ. Տատուրյանը, Հ. Թաթոսյանը՝ իրենց տիկնանց հետ, և այլ հյուրեր:

Հավարտ ս. պատարագի քարոզում է պատարագիչ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը՝ խոսելով հայ ժողովրդի կյանքում Մայր Աթոռ ս. Էջմիածնի կատարած լուսավորական, հայրենասիրական, ազգապահպան ման գործունեության մասին, ապա վեր է հանում վերջին տասնամյակում Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսի եկեղեցաշեն, հայրանվեր աշխատանքները, ինչպես նաև հովվապետական այցելությունները սփյուռքի հայության՝ համբարձումն մեր եկեղեցու միության և հանուն խաղաղության կատարած գործունեության: Ապա կատարվում է հայրապետական

մաղթանք Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Իշման սուրբ սեղանի առաջ:

Հավարտ հայրապետական մաղթանքի Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափորով և հյուրերի ուղեկցությամբ մուտք է գործում Վեհարանի գահասրահը, ուր հանուն միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի և հայ ժողովրդի, Վեհափառ Հայրապետի գահակալությունն է շնորհավորում գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝ մաղթելով երկար կյանք, արևշատություն Հայոց Հայրապետին և անսասանություն ու պայծառություն՝ Մայր Աթոռին:

Վեհափառ Հայրապետը խոսք առնելով Իր գոհունակությունն է հայտնում հանուն հայ եկեղեցու և ժողովրդի հայտնված շնորհավորական գեղեցիկ խոսքերի, արտահայտությունների համար և նշում է, որ այս տարին բացառիկ է մանավանդ նրա համար, որ մեր ժողովուրդը նշում է նաև այս ամսում իր սիրելի մայրաքաղաքի 2750-ամյակը:

Ն. Ս. Օծությունը բարեմաղթում է, որ մեր վերածնած ժողովուրդը և մայր հայրենիքը ապրեն բարօրության և խաղաղության մեջ:

Ժամը 3-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի գահակալության 13-րդ տարեդարձի, Վեհարանում տրվում է ճաշկերույթ, որի ընթացքում տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, պրոֆ.-դոկտ. Առաքել Առաքելյանը և երաժշտագետ Միհրան Թումանյանը շնորհավորում են Վեհափառ Հայրապետին:

Ճաշկերույթը վերջանում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով: